ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«10» 05 2021թ. N 201/475

«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Փոթոյանին
ք. Երևան, Աբովյան 23

Հարգելի պարոն Փոթոյան

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև ՀՀ ԱԱԾ կարիքների համար Դեղորայքի ձեռքբերման համար 2021 թվականի հունվարի 26-ին կնքված թիվ ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ԴԵՂՈՐԱՅՔ/3 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) և դրա հիման վրա 08.02.2021թ. կնքված N 1 Համաձայնագրի համաձայն «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն պարտավոր էր ՀՀ ԱԱԾ-ին մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

Շարունակական համարը	Ապրանքի անվանումը	Չ/մ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Գումար /ՀՀ դրամ/ 1-ին եռամսյակ	Մատակարարման ժամանակացույց 1-ին եռամսյակ, բայց ոչ ուշ քան 31.03.2021թ.	Չմատակարարված քանակ	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/
3	Տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04	հատ	115,00	1200	34500	300	300	138000
33	Բետահիստին (բետահիստինի դիհիդրոքլորիդ) N07CA01	հատ	70,30	2100	42180	600	600	147630
38	Թիոկտաթթու (ալֆա-լիպոյաթթու) A16AX01, A05BA	հատ	2228,00	25	33420	15	15	55700
52	Մոքսոնիդին C02AC05	հատ	254,00	560	35560	140	140	142240

73	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ) R06AC03, D04AA09	հատ	268,00	100	13400	50	50	26800
88	Տամսուլոզին (տամսուլոզինի հիդրոքլորիդ) - G04CA02	հատ	160,00	450	33600	210	210	72000
	Ընդամենը				**192660**			**582370**

Հաշվի առնելով նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ ԱԱԾ-ն 10.05.2021թ-ին միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը և N 1 Համաձայնագիրը վերը նշված ապրանքատեսակների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5(հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 3564.21 (երեք հազար հինգ հարյուր վաթսունչորս դրամ, քսանմեկ լումա) ՀՀ դրամ, որպես տույժ և տուգանք՝ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար 58237 (հիսունութ հազար երկու հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 582370 (հինգ հարյուր ութսուներկու հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Հարգանքով՝

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ